

Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ԴՊՐՈՑ

ՅԱՍՏՐԱՆԱՆ

ԻՆՏԻՄԻՆԻԻՆ ԼԵՐԱՐԱԿ ԼԵՆԻՆԻՆ:

Համաձայն տնօրէնութեան Ա. հ. հափառ. Վաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ Դի. ի սրահի սուրբ Եկեղեցւոյ Վատարինէ կուսի յԱստրախան քաղաքի կառուցաւ Դպրատուն մի նուիրագործութեամբ բարեպաշտ ժողովրդոց Հայոց քաղաքիս, ուրանօր ուսանին մանկունք աղքատ կարգի ժողովրդոց և հոգեւորականաց, և որովհետեւ կանգնումն յիշեալ դպրատան տնօրինեցաւ ներկայութեամբ Նորին Սրբութեան ի 1867 ամի, վասնորոց Հոգաբարձութիւնս Աստրախանայ Հայոց ծխական երկսեռի Հոգեւոր Դպրոցաց և համայն Հայ հասարակութիւն քաղաքիս հոգեւանդ փափագանօք և որդիական հարազատութեամբ առ Մայր Աթոռն սուրբ Էջմիածնի և առ մեծ Գահակալ Նորին ցանկայաք զայն Դպրատուն անուանել յանուն Նորին Ա. հ. հափառութեան «ԳԷՈՐԳԵԱՆ», առ ի յաւերժացունել զքաղցր յիշատակ անուան Նորին ի մեջ բնակչաց քաղաքիս և ի միտքս մատաղօրերոյն, ուստի յայտարարութեամբ ի 10 մայիսի տարւոյս համարաւ 101, զիմեալ առ Նորին Ա. հ. հափառութիւնն խնդրեցաք, բարեհաճել պսակել զցանկութիւն և զփափագ սրտից մերոց և Հասարակութեան, և Հայրապետական շնորհազեղ կոնդակաւ շնորհել մեզ լուծումն անուանակոչելոյ զայն նորակառոյց Դպրատունն յանուն Նորին Սրբութեան «Գէորգեան», ի յիշատակ բարենպատակ այցելութեան Նորին յԱստրախան քաղաքի յամին 1867, Առ այն խնդիր Հոգաբարձուացս՝ Նորին Աստուածաբանալ Ա. հ. հափառութիւնն բարեհաճեցաւ Հայրապետական Կոնդակաւ յ2 յունիսի այսր ամի 103, պատուիրել կոչել զյիշատակեալ Դպրատունն յանուն քաջամարտիկ զօրականին Քրիստոսի սրբոյն Գէորգայ կոչմամբս «Սուրբ Գէորգեան Դպրոց», Հոգաբարձութիւնս խնդութեամբ սրտի և հոգւոյ ընդունելով զյիշեալ շնորհազեղ Կոնդակ Նորին Սրբութեան՝ կարգաւորեաց համաձայն տնօրէնու-

թեան Նորին, անուանելով զյիշատակեալ Դպրատունն «Սուրբ Գէորգեան Դպրոց», վասնորոց առաքմամբ պատճէնի յիշեալ Կոնդակի ծանուցանելով զայսմանէ խմբագրատան Արարատայ խոնարհարար խնդրէ Հոգաբարձութիւնս, միջոցաւ Արարատ ամաղորոց հրատարակել ի գիտութիւն բոլոր համազգեաց, ի լոյս ընծայելով զոյգ ընդ զըրութեան այսորիկ և զպատճէն Հայրապետական Կոնդակի Նորին Ա. հ. հափառութեան:

ՀԻՄՆԵՐԻՆ՝ ԵՄԷԼԷ ԼԵՐԱԿ ԿԱՆԱԿԱՆ
ԻՆՏԻՄԻՆԻՆԻՆ
ՍԷՄԵՆ ԳԵՍԵԼԵԱՆԻ
ՅԷԼԵԱՆԻՆԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
ՍԱՐԳԻՍ ԻՆՏԵԼԵԱՆԻ:

Ի 29 ՅԷԼԵՒ 1871 ՎԷ

ՍԷՄԵՆԻՆ:

ՊԵՏԼԻՊ. ԾԱՌԱՅ ԲԵԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԼՄՕՔԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆՊԵՏ ԵՒ ԿԼԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԵՏՐՈՒՐԻ ՀԱՄԼԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԼԹՈՒՂԻԿԵ Է. Զ. ՄԻԱԾՆԻ. Հարազատ որդւոց Առաքելական սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ հաւատարիմ՝ Հոգաբարձուաց երկսեռ Դպրոցաց Հայոց Աստրախանայ Քրիստոսական ողջունիւ և Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք:

Ընթերցեալ զյայտարար գիր 2եր զգրեալն ի 10 մայիսի, հասու եղաք հաւատեալ բարենպատակ մտադրութեանցդ, որ վասն անուանելոյ յանուն մեր զտնօրինեալն ներկայութեամբ մերով յամին 1867 զգպրատունն ի սրահի սուրբ Վատարինեայ Եկեղեցւոյ քաղաքիդ՝ զկառուցեալն արդեամբք բարեպաշտ ժողովրդոց Աստրախանայ, ո՛չ սակաւ բերկրեալ առառացոյց զմեր հոգեկան խնդութիւնն ընդ հոգեւանդ փափագ և որդիական հարազատութիւն բարեպաշտ ժողովրդոց քաղաքիդ և 2եր իսկ բարեջան Հոգաբարձուացդ առ Մայր Աթոռն Հայաստանեայց սուրբ Էջմիածին և առ մեզ, որ ո՛չ արկանելով ի մոռացոնս, ցանկայք պահել ի միտս զյիշատակ զալստեան մերոյ և այցելութեան ի բարեձօխ քաղաքդ, Ե. յ. արդարեւ միսի-